ԾՆՈՒՆԴ ՎԱՀԱԳՆԻ

(հին հայերեն՝ գրաբար)

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տրված բառազույգերով կազմի՛ր համառոտ նախադասություններ:

ա) ուսուցիչ, պատմել ադ) կառուցել, տուն
բ) մայրիկ, խրատել ե) լույս, բացվել
գ) հյուսել, արագիլ զ) պայծառանալ, օր

2. Համառոտ նախադասություններն ընդարձակի՛ր:

ա) Լեոն բացատրում է: դ) Նանեն երգեց:
բ) Զինվորը քաջ է: ե) Տունը նորակառույց է:
գ) Այգին գեղեցիկ է: զ) Դասասենյակը մաքուր է: